ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության փորձագետ Աիդա Միրումյանի

2024թ. սեպտեմբերի 9-ից նոյեմբերի 8-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ ՀՀ ֆինանսների նախարարության (ՖՆ) համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ տնտեսության կիսակառուցվածքային ճեղքի մոդելի (SSGM մոդել) մշակման աշխատանքներին մասնակցություն: Մասնավորապես, մոդելում ներառված հատվածների հավասարումների, փոխառնչությունների վերանայում, տարբեր շոկերի ազդեցության փոխանցումային մեխանիզմների դիտարկում, տրենդների և ճեղքերի համապատասխանության ուսումնասիրություն,
- Ճապոնիայի կողմից իրականցվող օտարերկրյա ուղղակի ներդրումների ճյուղային և աշխարհագրական վերլուծություն, շնորհանդեսի ներկայացում,
- Գործընկեր և տարածաշրջանային երկրների սոցիալ-տնտեսական զարգացումների ուսումնասիրություն և ՀՀ տնտեսության վրա դրանց ազդեցությունների գնահատում,
- Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվների հիմնական բաղադրիչների վերլուծության և կանխատեսումների իրականացում, արդյունքների ներկայացում,
- Տնտեսության արտաքին կայունության, մասնավորապես, պաշտոնական պահուստների համարժեքության գնահատումների թարմացում,
- 2025թ. բյուջեի ուղերձ-բացատրագրի համապատասխան հատվածների ձևակերպում,
- 2024թ. ինն ամիսների պետական բյուջեի հաշվետվություններում համապատասխան հատվածների ձևակերպում,
- Տնտեսական իրավիճակի օպերատիվ վերլուծությունների շրջանակներում զեկույցների և շնորհանդեսների ներկայացում, անհրաժեշտ տեղեկանքների պատրաստում:

- Այլ գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված զեկույցների ուսումնասիրություն և մասնագիտական կարծիքի ներկայացում:

Մակրոտնտեսական քաղաքականության
վարչության փորձագետ՝ Աիդա Միրումյան

12. 11. 2024